Հաշմանդամությանն առնչվող օրենսդրություն. արդյունավետ գործիք, թե՞ բարի նպատակների ժողովածու

ԵՐԵՎԱՆ 2023

Funded by
the European Union

EASTERN PARTNERSHIP
CIVIL SOCIETY FORUM

This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of the Unison NGO and do not necessarily reflect the views of the European Union.

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես «Ունիսոն» ՀԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված է շուրջ 195000 հաշմանդամություն ունեցող անձ: Եթե դրան գումարենք Արցախից բռնի տեղահանված շուրջ 9000 հաշմանդամություն ունեցող մեր հայրենակիցներին, ապա կարող ենք պնդել, որ ՀՀ-ում ներկայումս բնակվում են 200000-ից ավելի հաշմանդամություն անձինք:

Հաշմանդամությանն առնչվող գործող օրենսդրությունը կոչված է ապահովել վերոնշյալ անձանց համար հավասար պայմաններ՝ հաշմանդամություն չունեցող քաղաքացիների հետ համեմատ: Ներառական կրթություն, աշխատանքային զբաղվածություն, քաղաքական կյանքին լիարժեք մասնակցություն, մշակութային ներառում, սպորտով զբաղվելու և ժամանցը կազմակերպելու պայմաններ, ընտանիկ կազմելու հնարավորություն, անկախ կյանք վարելու հիմնարար իրավունք՝ դրանք են հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատիվ կյանքի պարտադիր պայմանները: Այս ցանկը կարելի է լրացնել բազմաթիվ այլ կարևոր տարրերով:

Առաջին հերթին, հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կյանքի ապահովումը պետության պարտավորությունն է, որն իրացվում է հաշմանդամությանն առնչվող օրենքների, ենթաօրենսդրական և այլ իրավական ակտերի միջոցով:

Եվրոպական միության միջոցներով Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում իրականացվող MAGIC ծրագիրը միտված է պարզելու, թե որքանով արդյունավետ է նշյալ երկրներում գործում հաշմանդամությանն առնչվող օրենսդրությունը: Այդ հարցին պատասխան ստանալու համար «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը՝ լինելով ծրագրի առաջատար, Վրաստանի և Մոլդովայի գործընկեր ՀԿ-ների հետ համագործությամբ, իրականացրեց սոցիալական հարցումներ 3 երկրներում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

Սույն գրքույկում ներկայացված է Հայաստանում իրականացված սոցհարցման արդյունքների վերլուծությունը, ինչի հիման վրա մշակվել են հանձնարարականներ համապատասխան պետական մարմիններին: Հանձնարարականների հիմնական կետերը ներկայացված են գրքույքի եզրափակիչ մասում:

Հաշմանդամությանն առնչվող օրենսդրության կիրարկման արդյունավետությունը. սոցիալական հարցման արդյունքների վերլուծություն

Հեղինակ՝ Անահիտ Ղարիբյան

Ուսումնասիրության մեթոդաբանություն

Հիմնախնդրի ներկայացում

Հաշմանդամության հետ կապված օրենսդրության կիրառումն առանցքային նշանակություն ունի հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության և իրավակիրառ պրակտիկաների ներդրման համար: Հայաստանում դեռևս հաշմանդամության հետ կապված օրենսդրության կիրառումը ոչ բավարար արդյունավետություն ունի, որի վառ ապացույցն է երկրում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը: Օրենքների թերկատարումը և սոցիալ-մշակութային բազմաթիվ խոչընդոտներ, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը, անհավասար վերաբերմունքը, կարծրատիպերն ու նախապաշարմունքները հանգեցնում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոտնահարման դեպքերի ավելացմանը և նրանց հասարակական մեկուսացմանը: Այս առումով կարևոր է հասկանալ երկրում հաշմանդամության հետ կապված օրենսդրական դաշտի գործարկման խոչընդոտները, ինչպես նաև վերջինիս կիրառելիության մակարդակը, որպեսզի հնարավոր լինի հասցեական դարձնել խնդիրներն օրենսդիր մարմնի և պետական այլ ինստիտուտների համար:

Նպատակներ

Ուսումնասիրության նպատակն է պարզել հաշմանդամության հետ կապված օրենսդրության կիրառման մակարդակն ու արդյունավետությունը: Ընդ որում նկատի է առնվում, թե օրենսդրական դաշտի փոփոխություններից ու առկա դրույթներից որքանով են իրազեկված հաշմանդամություն ունեցող անձինք և արդյոք օրենսդրական կարգավորումներն ազդում են հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության տարբեր ոլորտների վրա, դիցուք՝ հանրային կյանքի մասնակցության, որոշումների կայացման, աշխատանքային իրավահարաբերությունների և այլնի վրա:

Ուսումնասիրությունը նպատակ ունի նաև բացահայտել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերմունքը երկրում օրենքների կիրառման արդյունավետության և պետական քաղաքականության շուրջ: Բացի այդ ուսումնասիրության արդյունքները համեմատվելու են Արևելյան Եվրոպայի մյուս երկրների՝ Վրաստանի և Մոլդովայի փորձի հետ:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար առանձնացվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

- Բացահայտել հաշմանդամության հետ կապված օրենսդրության կիրառման առանձնահատկությունները
- Ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց օրենքներից իրազեկվածության աստիճանը
- Իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց օրենքների վերաբերյալ գիտելիքների և դրանց կիրառման հմտությունների գնահատում
- Բացահայտել հաշմանդամության հետ կապված օրենսդրության արդյունավետությունը և համապատասխանությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին

- Ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակվող օրենսդրական կարգավորումների և պետության ջանքերի վերաբերյալ ձևավորված ընկալումները

Մեթոդներ

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնականում ներառում է տվյալների հավաքման քանակական մեթոդներ, ինչպես նաև դրանց մշակման որակական վերլուծական մոտեցումներ օրենսդրական դաշտի ազդեցության ու մշակութային/աշխարհագրական և այլ առանձնահատկություններ հաշվի առնելու համար:

Փաստաթղթերի վերլուծություն: Փաստաթղթերի վերլուծության համար դիտարկվել են հաշմանդամության հետ կապված ներքոգրյալ օրենքներն ու իրավական կարգավորումները, ինչպես նաև թեմային առնչվող այլ նյութեր:

1. Կոնվենցիա «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»
2. ՀՀ օրենք «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին»
3. ՀՀ օրենք «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»
4. ՀՀ կառավարության որոշում «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»
5. ՀՀ օրենք «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին»
6. ՀՀ կառավարության որոշումը «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին»
7. ՀՀ օրենք «Կրթության մասին»
8. ՀՀ օրենք «Զբաղվածության մասին»

Հարցաթերթիկային հարցում: Առցանց հարցումներ են անցկացվել թվով 111 հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում: Հարցաթերթի միջոցով հաշմանդամություն ունեցող անձինք ներկայացրել են իրենց վերաբերմունքը օրենսդրական առկա կարգավորումների արդյունավետության շուրջ և գնահատել իրենց իրազեկվածության աստիճանը:

Ընտրանքի ձևավորման հիմքերը

Առցանց հարցման հղումը շրջանառվել է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում՝ նախապես առկա տվյալների շտեմարանի միջոցով, այսինքն՝ «Ունիսոն» ՀԿ-ի և այլ գործընկեր կառույցներում առկա շահառուների շրջանում:

Առցանց հարցումների ընտրանքի տիպը տարերային է և հարցման մասնակիցներն այն լրացրել են ըստ ցանկության: Այդուհանդերձ, ստացված պատասխանների դիտարկմամբ, ինչպես նաև տվյալների բազայի հիման վրա, հաշվի են առնվել հաշմանդամություն ունեցող անձանց բնակության վայրն ու սեռատարիքային կազմը՝ որոշակի չափով հավասարակշռելու համար ընտանքի բաշխվածությունն ու ապահովելու համար կարծիքների բազմազանությունը:

Ստորև ներկայացնում ենք հարցմանը մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-ժողովրդագրական տվյալները: Այսպես, հարցմանը մասնակցել են 38% արական և 59% իգական սեռի հաշմանդամություն ունեցող անձինք, 3%-ը հրաժարվել են նշել իրենց սեռը (Գծապատկեր 1): Հարցվողների գրեթե կեսը՝ 40%-ը (թվով 44) 36-45 տարեկան են (Գծապատկեր 2): Հարցվողների 1/3-ն (թվով 40, 36%) ունեն բարձրագույն կրթություն (Գծապատկեր 3): 41%-ը (թվով 46) չեն աշխատում և աշխատանք են փնտրում (Գծապատկեր 4): Ինչ վերաբերում է ամուսնական կարգավիճակին, ապա 59%-ը (թվով 66) երբեք ամուսնացած չեն եղել (Գծապատկեր 5): Հարցվողների մեջ մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր հրաժարվել են նշել իրենց ընտանիքի միջին ամսական եկամուտը (Գծապատկեր 6): Գծապատկեր 7-ում ու 8-ում նշված են հարցվողների բնակավայրի տիպը:



Գծապատկեր 1. Հարցվողների սեռը



Գծապատկեր 2. Հարցվողների տարիքը

Գծապատկեր 3. Հարցվողների կրթական աստիճանը



Գծապատկեր 4. Հարցվողների զբաղմունքը



Գծապատկեր 5. Հարցվողների ամուսնական կարգավիճակը



Գծապատկեր 6. Հարցվողների ընտանիքի ամսական եկամուտը մեկ անձի հաշվով



Գծապատկեր 7. Հարցվողների բնակավայրի տիպը



Գծապատկեր 8. Հարցվողների բնակության մարզը

Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության աստիճանն իրավական փաստաթղթերից և օրենքներից

Վերջին տարիներին հաշմանդամության հետ կապված օրենսդրական կարգավորումների և մի շարք որոշումների ընդունումը դրական ազդեցություն կարող է ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարձրացման վրա:
Այդուհանդերձ դեռևս հասկանալի չէ, թե ինչպիսին է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում այդ օրենքների և որոշումների վերաբերյալ իրազեկվածության աստիճանը:



Գծապատկեր 9. Հարցվողների իրազեկվածությունը հաշմանդամության հետ կապված օրենքներից և իրավական փաստաթղթերից

Այս ուսումնասիրության ընթացքում հարցման միջոցով պարզել ենք, թե ինչպիսին է հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության աստիճանը մի շարք օրենքներից, որոնց արդյունքները ներկայացված են Գծապատկեր 9-ում: Այսպես, արդյունքների համաձայն հաշմանդամություն ունեցող անձինք ամենաբարձր իրազեկվածությունն ունեն Կրթության և Զբաղվածության մասին օրենքներից: Հարցվողներն ամենաքիչն են իրազեկված «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումից: Հարցման տվյալներով շատերի իրազեկ-

վածությունը ցածր է նաև ՀՀ կողմից վավերացրած՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայից։
Հատկանշական է, որ վերջին շրջանում մամուլում լուսաբանվող[1] «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքից[2] ևս իրազեկվածության աստիճանը բավականին ցածր է։ Այս առումով պատկան մարմինների կողմից ոչ բավարար իրազեկման միջոցառումների արդյունքում հաշմանդամություն ունեցող անձինք դեռևս լավ չեն պատկերացնում այս օրենքի գործարկման մեխանիզմներն ու դրանց ազդեցությունն իրենց առօրյա կենսագործունեության վրա։



Գծապատկեր 10. Օրենսդրական կարգավորումների և իրավական փաստաթղթերի վերաբերյալ գիտելիքների տիրապետման մակարդակը

Ընդհանուր առմամբ, քանի որ հարցմանը մասնակցած հաշմանդամություն ունեցող անձանց 1/3-ն (36%) ունեն բարձրագույն կրթություն, Գծապատկեր 10-ում կարող ենք տեսնել, որ հարցվողները տեղեկացված են որոշ իրավական կարգավորումներից և դրանցից օգտվել են (34%, 38 հարցվող)։ Այդուհանդերձ քիչ չեն հարցվողները, որոնք ընդհանրապես չեն տիրապետում հաշմանդամությանն առնչվող իրավական փաստաթղթերին ու օրենսդրությանը (22%, 24 հարցվող), ինչպես նաև նրանք, ովքեր նշել են, որ այդ հարցի շուրջ չեն մտածել և տեղեկացված չեն» (9%, 10 հարցվող)։ Շատ են նաև հարցվողները, ովքեր պարզապես լսել են որոշ իրավական փաստաթղթերի մասին, սակայն իրենց կյանքում չեն առնչվել դրանց (30%, 33 հարցվող)։

[1] Առաջինի լրատվական ալիք։ «2023 թ. փետրվարի 1-ից կներդրվի անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգ»։ https://www.youtube.com/watch?v=PaRcJjl38gA Դիտվել է 31.08.2023
[2] ՀՀ օրենք «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» https://www.arlis.am/documentview.aspx?docID=152964

Այսպիսով, հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ թեպետ հարցվողների շրջանում կա որոշակի իրազեկվածություն մի քանի իրավական կարգավորումներից, սակայն դրանց կիրառելիության աստիճանը բարձր չէ, քանի որ ավելի մեծ թիվ են կազմում այն հարցվողները, ովքեր նշել են, որ այդ հարցի շուրջ չեն մտածել, ընդհանրապես տեղեկացված չեն, և/կամ տեղեկացված են, սակայն չեն օգտվել հաշմանդամությանն առնչվող օրենքներից, որոշումներից և իրավական կարգավորումներից:

Իրավական փաստաթղթերի և օրենսդրության կիրարկումը

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում[3], որը վավերացվել է ՀՀ-ի կողմից 2010 թ.-ին, ամրագրված են մի շարք սկզբունքներ (Հոդված 3): Հարցվողների շրջանում այդ սկզբունքների պահպանման և առհասարակ կիրառման մասին հարցի շուրջ ստացվել են հետևյալ պատասխանները:



Գծապատկեր 11. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի սկզբունքների կիրառման աստիճանը

[3] Կոնվենցիա «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762

Այսպիսով, հարցման տվյալներով հիմնականում չի պահպանվում հաշմանդամություն ունեցող անձանց այլոց համեմատ հնարավորությունների հավասարության, ինչպես նաև մատչելիության սկզբունքը: Մասնավորապես, Գծապատկեր 11-ում երևում է, որ հարցվողների 44%-ը կամ 49 հարցվող նշել է, որ հնարավորությունների հավասարության սկզբունքը ընդհանրապես չի պահպանվում և 41%-ը կամ 46 հարցվող նշել է, որ ընդհանրապես չի պահպանվում մատչելիության սկզբունքը: Հարցվողների մեծամասնության համար (77%, 85 հարցվող) ***մասամբ*** կամ ***լիովին*** պահպանվում է «Հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելու» սկզբունքը, այնուհետև «Խտրականության բացառման» (72%, 80 հարցվող) և «Հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցության և ներգրավվածության» (72%, 80 հարցվող) սկզբունքները: Հետաքրքրական է, որ ամենաշատ թվով պատասխանները (9%, 10 հարցվող) «Այս հարցի շուրջ չեն մտածել և տեղեկացված չեմ» տարբերակի համար ստացվել է «Հարգանք արժանապատվության, անհատի ինքնուրույնության, ազատ ընտրության և անձի անկախության իրավունքի նկատմամբ» սկզբունքի վերաբերյալ:

Այսպիսով, հատկանշական է, որ հարցման արդյունքներով մի կողմից ցածր է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայից հարցվողների իրազեկվածության աստիճանը (Գծապատկեր 9), մյուս կողմից դրանում ամրագրված սկզբունքները հարցվողների մեծամասնության կարծիքով մասամբ կամ ընդհանրապես չեն պահպանվում (Գծապատկեր 11): Ընդ որում, 2022թ. ընդունվեց կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին օրենքը[4], ինչը որոշակի առումով կարող է նպաստել ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը: Սույնով մեր երկիրը ճանաչում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի հանձնառությունը, որը լիազորված է ընդունել և քննարկել իր իրավասության ներքո գտնվող անհատների կամ անհատների խմբերի կողմից կամ անունից ներկայացվող հաղորդումները «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների խախտումների վերաբերյալ[5]:

Հաջորդ հարցին, թե արդյոք պետությունը պարտավոր է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, դրական են պատասխանել գրեթե բոլոր հարցվողները: Միայն մեկ հարցվող է նշել, որ հարցի շուրջ չի մտածել և տեղեկացված չէ (Գծապատկեր 12):

[4] ՀՀ օրենք «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին»
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171697

[5] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը կնպաստի ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը: Հրապարակվել է 15.11.2022
http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=17679&year=2022&month=11&day=15 Դիտվել է 31.08.2023



Գծապատկեր 12. Պետության պարտավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելու հարցում

Այսինքն՝ հարցվողներն իրենք պետությանը լիազորել են առաջնահերթ դիրքով իրենց իրավունքների պաշտպանության և օրենքների կիրարկման հարցում: Այդուհանդերձ այս հարցում միտումնավոր չի նշվել, որ պետությունը պարտավոր չէ պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները տարբերակը: Փոխարենը կիրառվել է այլ՝ «Ոչ, հաշմանդամություն ունեցող անձանցից ոչ բոլորի իրավունքներն ու ազատություններն է հնարավոր պաշտպանել» տարբերակը՝ հասկանալու համար, թե արդյո՞ք հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում կա հաշմանդամության տարբեր տեսակներով անձանց նկատմամբ որոշակի անհավասարություն կամ նախապաշարմունքներ: Այս առումով կարող ենք համոզվել, որ հարցվողներն ամբողջությամբ միակարծիք են պետության պատերնալիստական դերի հարցում, և պետք է զբաղվի հավասարապես բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ:

Գնահատեք պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու հիմնարար ազատությունների ապահովման հարցում (n=111)				
ՊԱՅՄԱՆՆԵՐ/ՋԱՆՔԵՐ	Անբավարար	Մասամբ բավարար	Բավարար	Այս հարցի շուրջ չեմ մտածել և տեղեկացված չեմ
Կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը	53	44	10	4
Աշխատանքն ու զբաղվածությունը	50	48	9	4
Անձի ազատությունը և անվտանգությունը	47	42	17	5
Արդարադատության մատչելիությունը	43	48	10	10
Հավասարությունը և խտրականության բացառումը	42	51	13	5
Տեղաշարժվելու ազատությունը տանը և դրսում	40	49	19	3
Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը	39	49	18	5
Անհատական շարժունակությունը	39	50	17	5
Բուժումն ու վերականգնումը	39	54	14	4
Առողջությունը	38	53	16	4
Հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ հարգանք, որը վերաբերում է նրա ամուսնանալու, ընտանիք կազմելու, հայրության և/կամ մայրության, անձնական կյանք ունենալու որոշմանը:	37	43	23	8
Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքում	37	53	15	6
Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին	36	47	23	5
Շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը	35	39	18	19
Անձի անձեռնմխելիությունը	33	45	17	16
Խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի բացառումը	32	44	17	18
Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը	30	48	25	8
Խոսքի ու կարծիքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը	29	48	27	7
Կրթությունը	27	57	23	4

Աղյուսակ 1. Պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու հիմնարար ազատությունների ապահովման հարցում

Հարցվողները նաև գնահատել են պետության ներդրած ջանքերն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների ապահովման հարցում՝ ըստ տարբեր ոլորտների:

Աղյուսակում 1-ում ներկայացված են ստացված արդյունքները՝ հարցվողների անբավարար գնահատականների թվի նվազման կարգով:

Մասնավորապես, աղյուսակից երևում է, որ հարցվողների կողմից պետության ջանքերն իրավունքների պաշտպանության հարցում անբավարար գնահատված առաջին երեք

ուղղություններն են. ա) հաշմանդամություն ունեցող անձանց կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը, բ) աշխատանքն ու զբաղվածությունը, գ) անձի ազատությունը և անվտանգությունը:

Հատկանշական է, որ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության, աշխատանքի և զբաղվածության ապահովման տեսանկյունից բազմաթիվ բարեփոխումներ են իրականացվել, որոնք դեռևս մասնագետների կարծիքով կենսունակ չեն[6]: Մասնավորապես, մասնագետներն ու ոլորտի պատասխանատուները թերի են համարում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում ամրագրված քվոտայի պահանջը (Հոդված 20.5)[7] հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու համար, որը գործատուների կողմից ոչ միայն չարաշահվում է, այլև չի ունենում երկարատև արդյունք՝ հաշմանդամություն ունեցող անձանք զբաղվածության ապահովման տեսանկյունից[8]: Բացի այդ, Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության մակարդակը վերջին տարիներին մշտապես բարձր է[9]:

Վերադառնալով պետության ներդրած ջանքերի գնահատման հարցին՝ նշենք, որ հարցվողների կողմից բավարար գնահատված առաջին երեք ուղղություններն են՝ ա) խոսքի ու կարծիքի ազատությունն ու տեղեկատվության մատչելիությունը, բ) անձնական կյանքի նկատմամբ հարգանքը և գ) կրթությունը:

Կան նաև որոշակի ուղղություններ, որոնց շուրջ պետության ներդրած ջանքերի մասին հարցվողները երբևէ չեն մտածել կամ տեղեկացված չեն, մասնավորապես հարցվողների կողմից նշված այդպիսի երեք ուղղություններն են՝ ա) շահագործումից, բռնությունից և դաժան վերաբերմունքից ազատումը, բ) խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի բացառումը, գ) անձի անձեռնմխելիությունը:

Ընդ որում, ՀՀ ներպետական օրենսդրությամբ խոշտանգումներն արգելված են (ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդված), և դրանց համար սահմանված է պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 309.1-ով: Այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն, քանի որ հանցանքը խոշտանգում որակելու համար սուբյեկտը պետք է լինի պաշտոնատար անձ: Այս առումով, հարցվողների շրջանում խոշտանգումների, դաժան վերաբերմունքի կամ պատժի, հաշվեհարդարի բացառման վերաբերյալ տեղեկացված չլինելու հանգամանքը նախ պայմանավորված է այդ երևույթների սոցիալ-մշակութային ծագմամբ, ապա նաև իրավաբանորեն ոչ հստակ սահմանված լինելու հանգամանքով և հավելյալ պարզաբանման բացակայությամբ:

Առհասարակ, ստացված տվյալները ցույց են տալիս, որ հաշմանդամության հետ կապված օրենսդրության և իրավական փաստաթղթերի գործարկման հիմնական պատասխանատուն, ըստ հարցվողների մեծամասնության, պետությունն է: Վերջինիս պարտավորությունների մեջ է մտնում նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը:

Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքում ամրագրված է նաև պետության իրավասությունները, պարտավորություններն ու միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ

---

[6] Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը որպես լիարժեք կյանքի գրավական: https://bit.ly/3qVYi9u Դիտվել է 31.08.2023

[7] ՀՀ Օրենքը զբաղվածության մասին: https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

[8] Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գենդերազգայուն հետազոտություն: էջ 152 https://bit.ly/3sCK3XE

[9] Հաշմանդամությունը Հայաստանում: https://bit.ly/3sKPLqc

(Հոդված 14)[10]: Մասնավորապես նշվում է, որ հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառման նպատակով իրականացվող միջոցառումները պետք է միտված լինեն բարենպաստ միջավայրային գործոնների ստեղծմանը, միջավայրային արգելքների հաղթահարմանը, ինչը դեռևս պետության կողմից գործնականում լիարժեքորեն չի ապահովվում:



Գծապատկեր 13. Պետության պարտավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հարցում

Այս առումով, Գծապատկեր 13-ում տեսնում են, որ գրեթե բոլոր հարցվողները համոզված են, որ հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը պետության պարտավորություններից է: Հարցվողներից միայն 5-ն են նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանցից ոչ բոլորը պետք է ներառվեն հասարակության մեջ և մասնակցեն հանրային կյանքին: Այդուհանդերձ, թեպետ նման կարծիքների քանակը քիչ է, սակայն դրա առկայությունը փաստում է, որ խտրականության երևույթը որպես այդպիսին առկա է նաև հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում: Հիշեցնենք, որ նախորդ հարցերից մեկում, որը վերաբերում էր պետության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու ազատությունների ապահովմանը, խտրական դիրքորոշում ունեցողներ չկային:

Ստորև աղյուսակ 2-ում ներկայացնում ենք նաև սոցիալական ներառմանն ուղղված պետության ջանքերի գնահատման արդյունքները:

[10] ՀՀ Օրենքը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին: https://www.arlis.am/documentview.aspx?docID=152960

Գնահատեք պետության ջանքերը ձեր քաղաքում/համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ (n=111)				
ՊԱՅՄԱՆՆԵՐ	Անբավարար	Մասամբ բավարար	Բավարար	Այս հարցի շուրջ չեմ մտածել և տեղեկացված չեմ
Շենքերի և շինությունների մուտքերի մատչելիություն (այդ թվում՝ թեքահարթակներ), եթե ունեք հենաշարժողական խնդիրներ	70	30	5	6
Տարածք անարգել տեղաշարժվելու համար տանը և դրսում	61	39	6	5
Տրանսպորտային միջոցների մատչելիություն	58	35	12	6
Առավել կարևոր/հրատապ տեղեկատվության մատչելիություն	57	32	12	10
Փողոցների երթևեկության հարմարեցում ձեր կարիքներին	56	41	9	5
Ձայնային ազդանշանների և ռելիեֆային ուղեցուցիչների տեղադրում մարզկենտրոնների և Երևանի փողոցներում՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց անվտանգ և ինքնուրույն տեղաշարժի համար	51	35	8	17
Սոցիալական ենթակառուցվածքի (հիվանդանոց, պոլիկլինիկա, համալիր սոցիալական ծառայությունների կենտրոն և այլն) շենքերի և շինությունների մատչելիություն	50	44	11	6
Խաղահրապարակների, հանրային տարածքների, զբոսայգիների մատչելիություն	47	45	10	9
Հեռուստատեսությամբ հեռարձակվող լրատվական, մանկական և ուսումնական հաղորդումների սուրդոթարգմանություն	42	41	9	19
Բրայլի տառատեսակներով գրքերի, տետրերի, թերթերի և ամսագրերի տպագրություն, «խոսող գրքերի» ձայնագրություն	40	34	9	28

Աղյուսակ 2. Պետության ջանքերը քաղաքում/համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ

Մասնավորապես աղյուսակից երևում է, որ պետության ջանքերը, ուղղված սոցիալական ներառմանը, հարցվողներն անբավարար են գնահատել՝ ա) շենքերի և շինությունների մուտքերի մատչելիություն (այդ թվում՝ թեքահարթակներ), բ) տարածք անարգել տեղաշարժվելու համար տանը և դրսում, գ) տրանսպորտային միջոցների մատչելիություն տարբերակների համար: Ընդ որում, հիշեցնենք, որ մատչելիության վերաբերյալ նախորդ հարցերում ևս հարցվողներից շատերը նշել են, որ պետությունը չի ապահովում մատչելիության սկզբունքը: Հետաքրքրական է, որ հարցվողներն ամենաշատը չեն կողմնորոշվել հետևյալ երեք տարբերակները գնահատելիս՝ ա) Բրայլի տառատեսակներով գրքերի,

տետրերի, թերթերի և ամսագրերի տպագրություն, «խոսող գրքերի» ձայնագրություն բ) Հեռուստատեսությամբ հեռարձակվող լրատվական, մանկական և ուսումնական հաղորդումների սուրդոթարգմանություն գ) Ձայնային ազդանշանների և ռելիեֆային ուղեցուցիչների տեղադրում մարզկենտրոնների և Երևանի փողոցներում՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց անվտանգ և ինքնուրույն տեղաշարժի համար: Պատճառը միգուցե այն է, որ նշված տարբերակները միայն որոշակի ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց է վերաբերում, ինչը հարցվողների մի մասի համար կիրառելի չէ:



Գծապատկեր 14. Բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հարցում պետության պարտավորությունը

Ինչ վերաբերում է ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանը, ապա հարցվողներն այստեղ ևս համակարծիք են՝ նշելով, որ պետությունը պարտավոր է ապահովել ֆիզիկական միջավայրի մատչելիությունը բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընդ որում միայն 2-ն են նշել, որ հնարավոր չէ բոլորի համար ստեղծել մատչելի ֆիզիկական միջավայր:

Այդուհանդերձ, մատչելիության խնդիրը ոչ միայն ֆիզիկական միջավայրին կարող է վերաբերել, այլև հանրային բարիքներից հավասարապես օգտվելու իրավունքին, որի վերաբերյալ հաշմանդամություն ունեցող անձանց տված պատասխանները ներկայացված են Գծապատկեր 15-ում: Մասնավորապես, առաջին հերթին կարևորվում են կրթությունն (96%, 107 հարցվող) ու առողջապահական (96%, 107 հարցվող) ծառայությունները, այնուհետև՝ ֆիզիկական միջավայրի մատչելիությունը (95%, 105 հարցվող):

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների 2022թ. զեկույցում ասվում է, որ «*Ֆիզիկական խոչընդոտները, հասանելի տեղեկատվության ու հաղորդակցության բացակայությունը, ուսումնական ու բուժման սարքավորումների անհասանելիությունը և համապատասխան գիտելիքներ չունեցող բուժանձնակազմը սահմանափակել են առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ վերարտադրողական և սեռական առողջության ծառայու-*

թյունների հասանելիությունը հաշմանդամություն ունեցող կանանց համար, հատկապես՝ գյուղական բնակավայրերում»[11]:



Գծապատկեր 15. Պետության պարտավորությունն ապահովելու նշված պայմաններից յուրաքանչյուրի մատչելիությունը բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց համար

Գծապատկեր 15-ում նշված տարբերակներից հարցվողները մեծամասամբ նշել են որ այդ հարցի մասին չեն մտածել ա) հաղորդակցություն (6%, 7 հարցվող), բ) տնտեսական ակտիվություն (6%, 7 հարցվող), գ) սոցիալական շփում (6%, 7 հարցվող) տարբերակների դեպքում:

Գնահատեք պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար հետևյալ պայմանների մատչելիության ապահովման տեսանկյունից (n=111)				
ՊԱՅՄԱՆՆԵՐ	Անբավարար	Մասամբ բավարար	Բավարար	Այս հարցի շուրջ չեմ մտածել և տեղեկացված չեմ
Տնտեսական ակտիվությունը	62	40	6	3
Ժամանցը	59	40	8	4
Մշակութային միջավայրը	53	46	8	4
Ֆիզիկական միջավայրը	52	49	7	3
Առողջապահական ծառայությունները	50	50	8	3
Հաղորդակցությունը	45	52	7	7

[11]ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրո: «Մարդու իրավունքների մասին զեկույց» 2022թ. - Հայաստան: Էջ 54 https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2023_arm.pdf

Աղյուսակ 3. Պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար նշված պայմանների մատչելիության ապահովման տեսանկյունից

(տեղեկատվության ստացում և տրամադրում)				
Կրթությունը	44	52	13	2
Սպորտը	44	54	9	4
Սոցիալական շփումը	43	54	10	4

Ինչ վերաբերում է պետության ջանքերին, Աղյուսակ 3-ում ներկայացված են պետության կողմից ստեղծած պայմանների և ջանքերի վերաբերյալ հարցվողների գնահատականները: Մասնավորապես, աղյուսակից կարելի է տեսնել, որ ամենաշատ անբավարար գնահատականներ ստացած առաջին երեք տարբերակներն են՝ ա) տնտեսական ակտիվությունը, բ) ժամանցը և գ) մշակութային միջավայրը:

Կրթության մատչելիության ապահովմանն ուղղված պետության ջանքերը բավարար գնահատականների թվով առաջին տեղում է (12%, 13 հարցվող), ինչն այդուհանդերձ բարձր ցուցանիշ չէ և պայմանավորված է թերևս այն հանգամանքով, որ վերջին 10 տարիների ընթացքում պետությունը ջանքեր է գործադրում կրթության ներառականության ապահովման համար և տարեցտարի աճում է ներառական դպրոցների թիվը[12]: Հաճախակի է խոսվում նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթական իրավունքների պաշտպանության մասին, որոնք ամրագրված են ՀՀ Կրթության մասին օրենքում (Հոդված 6.6, 16, 19)[13]: Այդուհանդերձ, կրթության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար դեռևս խնդրահարույց է[14]՝ պայմանավորված ենթակառուցվածքի բացակայության, մանկավարժական անձնակազմին չվստահելու, հասարակության կարծրատիպային մոտեցումների և մի շարք այլ խնդիրների[15] պատճառով:

Ինչպես նախորդ հարցում էր, այս հարցում ևս հարցվողները պետության ներդրած ջանքերի շուրջ չեն մտածել և տեղեկացված չեն եղել հաղորդակցության մատչելիության ապահովման ոլորտում (6%, 7 հարցվող):

Ընդ որում, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշման[16] մեջ նշվում է, թե ինչ հիմնական միջոցառումներ են իրականացվել՝ ապահովելու համար աղյուսակում թվարկված պայմանների մատչելիությունը, որոնք փաստորեն հարցվողների մեծամասնության կարծիքով մասամբ կամ ընդհանարապես բավարար չեն:

[12] Ներառական կրթությունը Հայաստանի դպրոցներում: https://ampop.am/inclusive-education-in-armenia/ Դիտվել է 31.08.2023

[13] ՀՀ Օրենքը կրթության մասին: https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299

[14] Արմավիրի Զարգացման Կենտրոն. «Ներառական կրթության մշտադիտարկում. Ուսումնասիրության զեկույց»: 2019 https://bit.ly/3YZP4FG

[15] Ներառական կրթության խնդիրները Հայաստանում. մշտադիտարկման արդյունքներ: Հրապարակվել է 25.10.2019 https://uic.am/9283 Դիտվել է 31.08.2023

[16] ՀՀ Կառավարության որոշումը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին: https://www.arlis.am/documentview.aspx?docID=156446



Գծապատկեր 16. Հաշմանդություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառման համար պայմաններ ստեղծելու պետության պարտավորությունը

Խտրականության բոլոր ձևերի բացառման հարցում ևս պետության դերը հարցվողների համար խիստ կարևոր է, ինչպես կարող ենք տեսնել Գծապատկեր 16-ից: Մասնավորապես, հարցվողների 93%-ը կամ 103-ը գտնում է, որ պետությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որ ցանկացած մարդ պաշտպանված լինի խտրականությունից: Հատկանշական է, որ հարցվողներից 3-ը կարծում են, որ հաշմանդամություն ունեցող անձանցից ոչ բոլորի նկատմամբ պետք է բացառել խտրականությունը: 5 հարցվողներն էլ նշել են, որ խտրականության բացառման հարցում պետության դերի շուրջ չեն մտածել և տեղեկացված չեն:

Այս առումով ՀՀ սահմանադրությամբ և ներպետական այլ իրավական ակտերով, այդ թվում՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված են հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, այնուհանդերձ, դեռևս նախագծային փուլում է խտրականության դեմ պայքարի ոլորտը համապարփակ կարգավորող առանձին օրենքը:

Հաջորդ աղյուսակում ներկայացված են հարցվողների գնահատականները՝ կապված խտրականության տարբեր ձևերի վերացմանն ուղղված պետության ներդրած ջանքերին:

Գնահատեք պետության ջանքերը, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության հետևյալ ձևերի վերացմանը (n=111)				
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ	Անբավարար	Մասամբ բավարար	Բավարար	Այս հարցի շուրջ չեմ մտածել և տեղեկացված չեմ
Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ողջամիտ հարմարությունների չապահովում	57	42	8	4
Անհավասար վերաբերմունք	46	52	9	4
Բացառում միջավայից	45	44	9	13
Արհամարհարք և անտեսում	37	53	11	10

Չարաշահում և/կամ շահագործում աշխատավայրում կամ տանը	37	43	11	20
Ցանկացած տիպի ոտնձգություններ	34	43	13	21
Բռնություն	34	37	15	25
Անփույթ և վատ վերաբերմունք	33	50	15	13
Հոգեբանական ճնշում և հետապնդում	31	42	18	20
Հաշվեհարդար	31	35	15	30
Վիրավորանք և անարգանք	27	53	20	11

Աղյուսակ 4. Պետության ջանքերը, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության նշված ձևերի վերացմանը

Աղյուսակ 4-ից կարելի է տեսնել, որ պետության ջանքերի շուրջ անբավարար գնահատականներով առաջին երեք տարբերակները վերաբերում են խտրականության հետևյալ ձևերին՝ ա) հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ողջամիտ հարմարությունների չապահովում, բ) անհավասար վերաբերմունք, գ) բացառում միջավայից: Այսինքն՝ պետության ջանքերն այս ուղղություններով բարելավման կարիք ունեն՝ ըստ հարցման տվյալների:

Համեմատաբար բավարար են գնահատվել պետության ջանքերը ուղղված ա) վիրավորանքի և անարգանքի, բ) հոգեբանական ճնշման և հետապնդման, գ) բռնության ու ցանկացած տիպի ոտնձգությունների վերացմանը:

Ընդ որում հետաքրքրական է, որ միայն այս հարցի տարբերակների շուրջ են հարցվողներն ամենահաճախը նշել, որ հարցի մասին չեն մտածել և տեղեկացված չեն: Մասնավորապես, ամենահաճախը նշվել են՝ ա) հաշվեհարդար, բ) բռնություն, գ) չարաշահում և շահագործում աշխատավայրում կամ տանը տարբերակները:



Գծապատկեր 17. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորությունը որոշումների կայացման նշված գործընթացներին

Հարցվողները նաև համոզված են, որ իրենց մասնակցությունը հանրային կյանքում որոշումների կայացման գործընթացներին շատ կարևոր է: Մասնավորապես Գծապատկեր 17-ում երևում է, որ գրեթե բոլոր տարբերակները մեծ կարևորություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այդուհանդերձ հարցվողների համար ամենակարևոր

երեք տարբերակներն են՝ ա) մասնակցությունը ընտրություններին, բ) հանրային քննարկումներին և գ) օրենքների քննարկումներին: Համեմատաբար քիչ են կարևորվել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ա) ավագանու նիստերին, բ) սոցիալական կայքերի քննարկումներին և գ) ստորագրահավաքներին:



Գծապատկեր 18. Ընտրություններին քվեարկելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովելու պետությունը պարտավորությունը հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար

Ինչ վերաբերում է ընտրություններին մասնակցելու համար պայմանների ապահովմանը, ապա գրեթե բոլոր հարցվողները համակարծիք են, որ պետությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որպեսզի ցանկացած ոք կարողանա իրացնել իր ընտրելու իրավունքը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք:



Գծապատկեր 19. Հաշմանդամություն ունեցող անձանց անձնական օգնական տրամադրելու պետության պարտավորությունը

Մեկ այլ հարցում, ինչը վերաբերում է անձնական օգնականի[17] ինստիտուտի ներդրմանը, որի միջոցով կբարձրանա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումն ու հանրային ակտիվությունը, ինչպես նաև կապահովվի նրանց անկախ կյանք վարելու հնարավորությունը, հարցվողների դիրքորոշումները ներկայացված են Գծապատկեր 19-ում: Մասնավորապես, հարցվողների 74%-ը նշել է, որ պետությունը պարտավոր է հաշ-մանդամություն ունեցող անձանց տրամադրել անձնական օգնական, որ ցանկացած մարդ պաշտպանված զգա իրեն հասարակության մեջ: 12%-ն այս հարցի շուրջ մտածել է, սա-կայն չի կայացրել վերջնական որոշում: 12%-ը նշել է, որ հաշմանդամություն ունեցող ան-ձանցից շատերը չունեն անձնական օգնականի կարիք, քանի որ ընտանիքի անդամները կարող են ավելի լավ աջակցել ու խնամել նրանց: Եվ միայն 5%-ն է նշել, որ այս հարցի շուրջ չի մտածել և տեղեկացված չէ:

Ըստ էության, անձնական օգնականի ինստիտուտը մեծապես կարող է նպաստել հաշման-դամություն ունեցող անձանց լիարժեք կյանքին, ինչպես նաև համայնքում ներառվելու ու հանրային կյանքին մասնակցելու իրավունքների իրացմանը: Այսպես, անձնական օգնա-կանի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները սահմանվել է կառավարության կողմից 2022 թ.-ի օգոստոսի 11-ին ընդունված որոշմամբ[18], սակայն որոշումն ուժի մեջ է մտնելու 2024 թ.-ի հունվարի 1-ից: Միևնույն ժամանակ, նախատեսվում է 2023թ.-ին իրականացնել փորձնական (պիլոտային) ծրագիր[19], որով հնարավոր կլինի հասկանալ համակարգի խնդիրները: Այդուհանդերձ, օրենքում կան բազմաթիվ դրույթներ, որոնք

[17] **Անձնական օգնական՝** ֆիզիկական անձ, որը տվյալ պահին հաշմանդամություն ունեցող անձի հետ է և իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձի խնամքը և (կամ) աջակցում (օգնում) հաշմանդամություն ունեցող անձին՝ հաղթահարելու միջավայրային արգելքները (այդ թվում՝ տեղաշարժվելու և հաղորդակցվելու):

[18] ՀՀ կառավարության որոշումը անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին https://e-gov.am/gov-decrees/item/38850/

[19] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ֆեյսբուքյան էջ. Անձնական օգնականի ծառայության, խելամիտ հարմարեցումներ: https://www.facebook.com/watch/?ref=external&v=796964568148951 Դիտվել է 31.08.2023

առաջացնում են հաշմանդամություն ունեցող անձանց դժգոհությունները: Մասնավորապես, դրանցից մեկն այն է, որ անձնական օգնականի ծառայություններից օգտվելու համար հաշմանդամություն ունեցող անձը պետք է ներառված լինի սոցիալական անապահովության համակարգում[20]:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալն ու հարցման արդյունքները՝ կարող ենք պնդել, որ հաշմանդամություն ունեցող անձինք թեպետ որոշ չափով տեղեկացված են հաշմանդամության հետ կապված իրավական փաստաթղթերից և օրենքներից, սակայն դրանց կիրարկման արդյունավետությունն ու պետության ջանքերը շատերի համար բավարար չեն: Այսինքն՝ մի շարք միջոցառումներ, որոնք իրականացվում են պետության կողմից օրենսդրական դաշտի բարեփոխման միջոցով, իրենց գործնական կիրառելիությունը չեն գտել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հետևաբար, անհրաժեշտ է դրանց գործարկման համար ավելացնել պետական միջոցառումների քանակն ու որակը և ապահովել դրանց արդյունավետությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հիմնական բացահայտումներ

- Հարցման արդյունքներով հաշմանդամություն ունեցող անձինք ամենաբարձր իրազեկվածությունն ունեն Կրթության և Զբաղվածության մասին օրենքներից: Հարցվողներն ամենաքիչն են իրազեկված «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումից: Հարցման տվյալներով շատերի իրազեկվածությունը ցածր է նաև ՀՀ կողմից հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայից: «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքից իրազեկվածության աստիճանը բավականին ցածր է:
- Հարցման արդյունքներով, մի կողմից, ցածր է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայից հարցվողների իրազեկվածության աստիճանը, մյուս կողմից, դրանում ամրագրված սկզբունքները, հարցվողների մեծամասնության կարծիքով, մասամբ կամ ընդհանրապես չեն պահպանվում:
- Ըստ հարցման արդյունքների, Հայաստանում հիմնականում չի պահպանվում հաշմանդամություն ունեցող անձանց այլոց համեմատ հնարավորությունների հավասարության, ինչպես նաև մատչելիության սկզբունքը, որն ամրագրված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում: Մասնավորապես, հարցվողների 44%-ը նշել է, որ հնարավորությունների հավասարության սկզբունքը ընդհանրապես չի պահպանվում, իսկ 41%-ի կարծիքով, ընդհանրապես չի պահպանվում մատչելիության սկզբունքը: Հարցվողների մեծամասնության համար (77%, 85 հարցվող) ***մասամբ*** կամ ***լիովին*** պահպանվում է «Հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց յուրահատուկ լինելու նկատմամբ և նրանց՝ որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելու» սկզբունքը, այնուհետև «Խտրականության բացառման» (72%, 80 հարցվող) և «Հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցության և ներգրավվածության» (72%, 80 հարցվող) սկզբունքները:

- Հարցվողները պետության ջանքերն իրավունքների պաշտպանության հարցում հիմնականում անբավարար են գնահատել հետևյալ ուղղություններով. ա) հաշ-

[20] Աստղիկ Կարապետյան. «Անձնական օգնական՝ հաշմանդամություն ունեցող անձանց Երկար սպասված և դեռևս ոչ իրական»: https://evnreport.com/arm/law-society-arm/persons-disability-assistant/ Դիտվել է 31.08.2023

մանդամություն ունեցող անձանց կենսապահովման բավարար մակարդակն ու սոցիալական պաշտպանությունը, բ) աշխատանքն ու զբաղվածությունը, գ) անձի ազատությունը և անվտանգությունը։ Հարցվողների կողմից բավարար գնահատված առաջին երեք ուղղություններն են. ա) խոսքի ու կարծիքի ազատությունն ու տեղեկատվության մատչելիությունը, բ) անձնական կյանքի նկատմամբ հարգանքը և գ) կրթությունը։

- Սոցիալական ներառմանն ուղղված պետության ջանքերը հիմնականում անբավարար են գնահատվել հետևյալ երեք ուղղություններով՝ ա) շենքերի և շինությունների մուտքերի մատչելիությունը (այդ թվում՝ թեքահարթակներ), բ) տարածք անարգել տեղաշարժվելու համար տանը և դրսում, գ) տրանսպորտային միջոցների մատչելիությունը։
- Հարցվողները հանրային բարիքների և պայմանների մատչելիության կարևորությունը գնահատելիս առաջին հերթին նշել են կրթությունը (96%, 107 հարցվող) և առողջապահական ծառայությունները (96%, 107 հարցվող), այնուհետև՝ ֆիզիկական միջավայրի մատչելիությունը (95%, 105 հարցվող)։
- Հարցվողները հիմնականում անբավարար են գնահատել ա) տնտեսական ակտիվության, բ) ժամանցի և գ) մշակութային միջավայրի մատչելիության ապահովման պետության ջանքերը։
- Խտրականության բոլոր ձևերի բացառման հարցում պետության դերը հարցվողների համար խիստ կարևոր է։ Մասնավորապես, հարցվողների 93%-ը կամ 103-ը գտնում է, որ պետությունը պետք է այնպիսի պայմաններ ստեղծի, որ ցանկացած մարդ պաշտպանված լինի խտրականությունից։ Հատկանշական է, որ հարցվողներից 3-ը կարծում են, որ հաշմանդամություն ունեցող անձանցից ոչ բոլորի նկատմամբ պետք է բացառել խտրականությունը։ 5 հարցվող էլ նշել է, որ խտրականության բացառման հարցում պետության դերի շուրջ չեն մտածել և տեղեկացված չեն։ Պետության ջանքերի շուրջ անբավարար գնահատականներով առաջին երեք տարբերակները վերաբերում են խտրականության հետևյալ ձևերին՝ ա) հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ողջամիտ հարմարությունների չապահովում, բ) անհավասար վերաբերմունք, գ) բացառում միջավայից։ Այսինքն՝ պետության ջանքերն այս ուղղություններով բարելավման կարիք ունեն՝ ըստ հարցման տվյալների։
- Հարցվողները համոզված են, որ իրենց մասնակցությունը հանրային կյանքում որոշումների կայացման գործընթացներին շատ կարևոր է։ Մասնավորապես, հարցվողների համար ամենակարևոր երեք ուղղություններն են՝ ա) մասնակցությունը ընտրություններին, բ) մասնակցությունը հանրային քննարկումներին և գ) մասնակցությունն օրենքների քննարկումներին։ Համեմատաբար քիչ են կարևորվել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ա) ավագանու նիստերին, բ) սոցիալական կայքերի քննարկումներին և գ) ստորագրահավաքներին։
- Ինչ վերաբերում է անձնական օգնականի ինստիտուտի ներդրմանը, հարցվողների 74%-ը նշել է, որ պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել անձնական օգնական, որ ցանկացած մարդ պաշտպանված զգա իրեն հասարակության մեջ։ 12%-ն այս հարցի շուրջ մտածել է, սակայն չի կայացրել վերջնական որոշում։ Եվս 12% նշել է, որ հաշմանդամություն ունեցող անձանցից շատերը չունեն անձնական օգնականի կարիք, քանի որ ընտանիքի անդամները կարող են ավելի լավ աջակցել ու խնամել նրանց։ Եվ միայն 5%-ն է նշել, որ այս հարցի շուրջ չի մտածել և տեղեկացված չէ։

Օգտագործված և հղված գրականության ցանկ

Կոնվենցիա «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762

ՀՀ օրենք «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին»
https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171697

ՀՀ օրենք «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docID=152960

ՀՀ Կառավարության որոշում «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027թթ. համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docID=156446

ՀՀ օրենք «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docID=152964

ՀՀ կառավարության որոշում «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին»
https://e-gov.am/gov-decrees/item/38850/

ՀՀ օրենք «Կրթության մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299

ՀՀ օրենք «Զբաղվածության մասին»
https://www.arlis.am/documentview.aspx?docid=87734

Արմավիրի զարգացման կենտրոն. «Ներառական կրթության մշտադիտարկում. Ուսումնասիրության զեկույց»: 2019թ.
https://bit.ly/3YZP4FG

Հայաստանում աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գենդերազգայուն հետազոտություն
https://bit.ly/3sCK3XE

Մարդու իրավունքների զեկույց 2022թ., էջ 54
https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2023_arm.pdf

Հանձնարարականներ ոլորտին առնչվող պետական մարմիններին

- Ընդլայնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի ՀՀ-ում կիրառման մոնիտորինգի ծավալը՝ Կոնվենցիայի բոլոր հիմնարար դրույթների իրացման տեսանկյունից, ինչպես նաև հստակեցնել և խստացնել Կոնվենցիայի դրույթների խախտումների համար պատասխանատվությունը
- Ընդունել «Խտրականության մասին» ՀՀ օրենքը
- Գործուն միջոցներ ձեռնարկել փոխհատվող խտրականության ենթարկվող անձանց (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող կանանց) պաշտպանության համար
- Լրացումներ և փոփոխություններ մտցնել «Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ, մասնավորապես, վերացնելով անձնական օգնականների պարտադիր լիցենզավորման պահանջը և միայն նպաստառու ընտանիքների անդամներին անձնական օգնականների ծառայությունների տրամադրման սահմանափակումը
- Լրացնել ՀՀ «Ընտրական օրենսգիրքը» և այլ առնչվող իրավական ակտերը դրույթներով, որոնք հաշմանդամություն ունեցող քաղաքացիների (այդ թվում՝ սայլակ օգտագործող անձանց) ընտրական իրավունքի լիարժեք և անխոչընդոտ իրացման գործուն մեխանիզմներ կստեղծեն
- Հստակեցնել միջավայրի ֆիզիկական մատչելիության ապահովմանն ուղղված իրավական ակտերը և խիստ պատասխանատվություն սահմանել սահմանված նորմերի խախտման համար
- Բարելավել տեղեկատվական մատչելիության ապահովմանն ուղղված իրավական դաշտը և գործուն քայլեր ձեռնարկել դրա խթանման ուղղությամբ
- Կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց կենսապահովման բարձրացմանը, սահմանել աշխատելու ֆիզիկական և/կամ մտավոր հնարավորություն չունեցող անձանց նվազագույն կենսաթոշակի չափը՝ նվազագույն սպառողական զամբյուղի չափին համարժեք
- Բարեփոխել օրենսդրական դաշտը՝ հաշմանդամություն ունեցող անձանց տնտեսական ակտիվությունը խթանելու նպատակով
- Իրականացնել օրենսդրական դաշտի վերաբերյալ իրազեկման լայնածավալ համակարգված միջոցառումներ, ապահովելով դրանց մատչելիությունը մտավոր, տեսողության և այլ խնդիրներ ունեցող անձանց համար

Բովանդակություն

Նախաբան 3

Հաշմանդամությանն առնչվող օրենսդրության կիրարկման արդյունավետությունը. սոցիալական հարցման արդյունքների վերլուծություն 4

Ուսումնասիրության մեթոդաբանություն 4

Հիմնախնդրի ներկայացում 4

Նպատակներ 4

Մեթոդներ 5

Հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության աստիճանն իրավական փաստաթղթերից և օրենքներից 8

Իրավական փաստաթղթերի և օրենսդրության կիրարկումը 10

Հիմնական բացահայտումներ 24

Օգտագործված և հղված գրականության ցանկ 26

Աղյուսակ 1. Պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ու հիմնարար ազատությունների ապահովման հարցում 13
Աղյուսակ 2. Պետության ջանքերը քաղաքում/համայնքում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղությամբ 16
Աղյուսակ 3. Պետության ջանքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար նշված պայմանների մատչելիության ապահովման տեսանկյունից 18
Աղյուսակ 4. Պետության ջանքերը, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության նշված ձևերի վերացմանը 21

Գծապատկեր 1. Հարցվողների սեռը 6
Գծապատկեր 2. Հարցվողների տարիքը 6
Գծապատկեր 3. Հարցվողների կրթական աստիճանը 6
Գծապատկեր 4. Հարցվողների զբաղմունքը 6
Գծապատկեր 5. Հարցվողների ամուսնական կարգավիճակը 7
Գծապատկեր 6. Հարցվողների ընտանիքի ամսական եկամուտը մեկ անձի հաշվով 7
Գծապատկեր 7. Հարցվողների բնակավայրի տիպը 7
Գծապատկեր 8. Հարցվողների բնակության մարզը 7
Գծապատկեր 9. Հարցվողների իրազեկվածությունը հաշմանդամության հետ կապված օրենքներից և իրավական փաստաթղթերից 8
Գծապատկեր 10. Օրենսդրական կարգավորումների և իրավական փաստաթղթերի վերաբերյալ գիտելիքների տիրապետման մակարդակը 9
Գծապատկեր 11. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի սկզբունքների կիրառման աստիճանը 10

Գծապատկեր 12. Պետության պարտավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները պաշտպանելու հարցում..... 12
Գծապատկեր 13. Պետության պարտավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հարցում..... 15
Գծապատկեր 14. Բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման հարցում պետության պարտավորությունը..... 17
Գծապատկեր 15. Պետության պարտավորությունն ապահովելու նշված պայմաններից յուրաքանչյուրի մատչելիությունը բոլոր ձևերի հաշմանդամություն ունեցող անձանց համար..... 18
Գծապատկեր 16. Հաշմանդություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառման համար պայմաններ ստեղծելու պետության պարտավորությունը..... 20
Գծապատկեր 17. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորությունը որոշումների կայացման նշված գործընթացներին..... 21
Գծապատկեր 18. Ընտրություններին քվեարկելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ապահովելու պետությունը պարտավորությունը հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար..... 22

Հանձնարարականներ ոլորտին առնչվող պետական մարմիններին 27

Ծրագիրն իրականացվում է ԱլԳ Քաղաքացիական հասարակության ֆորումի (FSTP) Անդամներին Վերաֆինանսավորման ծրագրի միջոցով և ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից՝ որպես տարածաշրջանի քաղաքացիական հասարակությանն իր աջակցության մաս: Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումը (ԱլԳ ՔՀՖ) իր Վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում աջակցում է իր անդամների նախագծերին, որոնք նպաստում են ֆորումի առաքելության և նպատակների իրականացմանը: Դրամաշնորհները հասանելի են Արևելյան գործընկերության և ԵՄ երկրների ՔՀԿ-ների համար: Աջակցության հիմնական ոլորտներն են ժողովրդավարությունը և մարդու իրավունքները, տնտեսական, ինտեգրումը, շրջակա միջավայրը և էներգետիկան, մարդկանց միջև շփումները, սոցիալական և աշխատանքային քաղաքականությունը:

«ՈՒՆԻՍՈՆ» ՀԿ
ԵՐԵՎԱՆ, 0002, ԴԵՄԻՐՃՅԱՆ 36
WWW.UNISON.AM
WWW.FACEBOOK.COM/UNISON.AM
UNISON@UNISON.AM

© 2023 UNISON